ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«21» դեկտեմբերի 2021 թվականի N 331-Ա

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի ԹԻՎ 16/2
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 9-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2019 թվականի հուլիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի քաղաքացիական ծառայության մի շարք պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 16/2 որոշման թիվ 15 հավելվածի (Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի երկրորդ վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 46-32.2-Մ2-6) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիր) «**3.1.Կրթությունը, որակավորման աստիճանը**» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«**3.1.Կրթությունը, որակավորման աստիճանը**
Բարձրագույն կրթություն»:
2. Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2019 թվականի հուլիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի քաղաքացիական ծառայության մի շարք պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 16/2 որոշման թիվ 73 հավելվածի (Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի

իրավաբանական բաժնի պետի (ծածկագիր՝ 46-38-Ղ4-1) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիր) **«1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ»** և **«1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները»** ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« **1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ**

Բաժնի պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու է Բաժնի աշխատողը:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետը:»:

3. Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2019 թվականի հուլիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի քաղաքացիական ծառայության մի շարք պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 16/2 որոշման թիվ 76 հավելվածի (Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 46-38-Մ2-3) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի **«1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները»** ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« **1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետը:»:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ

ՆԱԽԱԳԱՀ Լ. ՅՈԼՅԱՆ